



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՇՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾՍԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 09/20

14.05.2020թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/11448/05/19 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 60, 61, 63, 78, 79-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 83-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը» եզրույթը բավարար չափով որոշակի չէ, որպեսզի կանխատեսելի լինի վիճարկվող վարչական ակտի, մասնավորապես՝ շինարարության թույլտվության հասցեատիրոջ համար՝ արդյո՞ք նա իրավունք ունի շինարարության թույլտվությունը վիճարկված լինելու պարագայում իրականացնելու շինարարություն:

«Վարչական ակտի կատարում» արտահայտությունը կարող է մեկնաբանվել երկակի՝ «նեղ» և «լայն» իմաստներով:

«Նեղ» իմաստով «վարչական ակտի կատարումը» սահմանափակվում է միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի V բաժնում ներառված նորմերով սահմանված կարգով միջամտող վարչական ակտի հարկադիր կատարմամբ: «Վարչական ակտի կատարման» հարցի հետ կապված այլ կարգավորումներ օրենքները չեն պարունակում: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի այս կերպ մեկնաբանման դեպքում շինարարության թույլտվությունը՝ որպես երկակի ազդեցության վարչական ակտ (հասցեատիրոջ համար՝ բարենպաստ վարչական ակտ, շահագրգիռ այլ անձանց համար՝ միջամտող), կատարում չի ենթադրում, քանի որ դրանով սահմանվում է շինարարության իրավունք: Իսկ իրավունքի հասցեատերը ոչ թե կատարում է վարչական ակտը, այլ իրացնում վարչական ակտով սահմանված իր իրավունքը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի V բաժնում խոսքը բացառապես վարչական մարմնի կողմից միջամտող վարչական ակտի կատարման մասին է:

Մյուս կողմից, Օրենսգրքի 83-րդ հոդվածը դատավարական ինստիտուտ է ամրագրում և այն չի կարող կաշկանդվել վարչարարական հասկացություններով: Նշված հոդվածում գործածվող «վարչական ակտի կատարում» արտահայտությունը կարող է մեկնաբանվել ինքնավար՝ անկախ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ

օրենքի V բաժնի նորմերից: Ըստ այդմ, «վարչական ակտի կատարումը» «լայն» իմաստով կարող է ներառել նաև երկակի ազդեցության վարչական ակտերը (այդ թվում՝ շինարարության թույլտվությունը), քանի որ այլ շահագրգիռ անձանց համար այն նույն միջամտող ազդեցությունն ունի: Ուստի այդ անձինք ևս պետք է օգտվեն Օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումից ճիշտ այնպես, ինչպես ցանկացած միջամտող վարչական ակտ վիճարկողները (բացառությամբ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հատուկ դեպքերի):

Դիմողը նկատում է նաև, որ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերևում նշված երկու եղանակով մեկնաբանության արդյունքում էլ խախտվում է Սահմանադրությունը:

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի «նեղ» մեկնաբանման պարագայում, փաստորեն, մի շարք վարչական ակտերի (երկակի ազդեցության վարչական ակտեր, այդ թվում՝ շինարարության թույլտվություն) վիճարկումը չի կասեցնում դրանց գործողությունը: Միաժամանակ, Օրենսգրքի 91-րդ հոդվածը արգելում է դատարանին վիճարկման հայցով հայցի ապահովման միջոց ձեռնարկելը: Արդյունքում ստացվում է, որ վարչական դատավարությունում առկա չէ հայցվորի օգտին հնարավոր դատական ակտի կատարման ապահովող որևէ երաշխիք: Եթե նույնիսկ հայցի հարուցման պահին կամ գործի քննության հետագա փուլերում դատարանի համար ակնհայտ լինի, որ հայցվորի դատական պաշտպանության արդյունավետությունը ռեալ վտանգի տակ է, նա չունի ոչ մի մեխանիզմ դրան հակադրելու:

Նշված իրավիճակը լիովին կարող է հանդիպել նաև շինարարության թույլտվության վիճարկման դեպքում: Հայցի հարուցման կամ գործի քննության հետագա փուլերում կարող է առկա լինել ռեալ վտանգ, որ վիճարկվող վարչական ակտով նախատեսված շինարարությունը իրականացվելու պայմաններում հայցվորի իրավունքները կարող են էականորեն տուժել, ընդհուպ մինչև կյանքի և առողջության իրավունքները (եթե, օրինակ, առկա լինեն բավարար հիմքեր ողջամտորեն կասկածելու, որ կառուցվելու է մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող օբյեկտ): Սակայն նման դեպքերում, ինչպես նշվեց վերը, Օրենսգրքի որևէ նորմ հնարավորություն չի տալիս հայցվորին նախաձեռնելու, իսկ դատարանին կիրառելու ժամանակավոր դատական միջամտության գործիքներ: Նկարագրվածի արդյունքում խախտվում է մարդու դատական պաշտպանության իրավունքը՝ երաշխավորված Սահմանադրության 61, 63-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով:

Այսպիսով, Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի «նեղ» մեկնաբանման դեպքում խախտվում է հայցվորի դատական պաշտպանության իրավունքը:

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի «լայն» մեկնաբանման պայմաններում, փաստորեն, յուրաքանչյուր միջամտող վարչական ակտի վիճարկում մեխանիկորեն կհանգեցնի դրա գործողության կասեցմանը: Նշված վարչական ակտերի շարքում կարող են լինել *inter alia* ինչպես սեփականության իրավունք ուղղակի ճանաչող վարչական ակտեր (սեփականություն տրամադրելու մասին տեղական ինքնակառավարման մարմնի որոշում, անշարժ գույքի կադաստրի մարմնի կողմից սեփականության իրավունքի գրանցում և այլն), այնպես էլ վարչական ակտեր, որոնց արդյունքում ստեղծվում է սեփականության իրավունքով պաշտպանվող արժեք (շինարարության թույլտվություն, լիցենզիա և այլն):

Ուստի Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի «լայն» մեկնաբանման դեպքում հաճախ սահմանափակվում է մարդու սեփականության իրավունքը (այդ թվում՝ շինարարության թույլտվության դեպքում):

Ըստ Դիմողի՝ վերը շարադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1) Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպված չէ այնպիսի հստակությամբ, որ իրավահարաբերության մասնակիցների համար կանխատեսելի լինի՝ կոնկրետ իրավիճակում իրենց օգտին կայացված վարչական ակտի (այդ թվում՝ շինարարության թույլտվությունը) գործողությունը կասեցվում է, թե՛ ոչ: Արդյունքում Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված իրավական որոշակիության սկզբունքին:

2) Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը, ինչ եղանակով էլ որ մեկնաբանվի, միևնույն է խախտվում է Սահմանադրության 61, 63-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի մեկնաբանությունը, որի համաձայն երկակի ազդեցության վարչական ակտերի (այդ թվում՝ շինարարության թույլտվություն) վիճարկումը չի կասեցնում դրանց գործողությունը, մեխանիկորեն զրկում է հայցվորին իր օգտին կայացվելիք հնարավոր դատական ակտի կատարումը երաշխավորելու հնարավորությունից: Իսկ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի հակառակ մեկնաբանության դեպքում մեխանիկորեն սահմանափակվում է վիճարկվող վարչական ակտի հասցեատիրոջ սեփականության իրավունքը, որը դատական կարգով պաշտպանելու հնարավորությունն օրենսդիրը չի նախատեսում: Արդյունքում Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի առաջին եղանակով մեկնաբանման դեպքում կարող է իրավիճակ ստեղծվել, երբ մարդկանց (այդ թվում՝ հայցվորի) կյանքին և առողջությանը ակնհայտորեն սպառնացող շինարարությունը կշարունակվի, և դատարանը չի կարող այն կասեցնել, իսկ երկրորդ եղանակով մեկնաբանման արդյունքում կարող է իրավիճակ ստեղծվել, երբ ակնհայտորեն բավարար հիմքեր չունեցող հայցի հիման վրա կկասեցվի շինարարությունը՝ էական վնաս պատճառելով կառուցապատողին:

Վերոգրյալի հիման վրա՝ Դիմողը գտում է, որ Օրենսգրքի 83-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն է.

1. Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝

1) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

2) այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ էլնելով հանրային շահերից.

3) այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ.

4) այն դեպքերի, երբ վիճարկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ:

2. Հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը:

3. Միջնորդության վերաբերյալ որոշումը կայացվում է 3 օրվա ընթացքում:

4. Միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

5. Վարչական դատարանն իրավասու է վիճարկման հայցի կասեցումը պայմանավորելու որոշակի ժամկետով և կարող է ցանկացած ժամանակ փոխել կամ վերացնել իր որոշումը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Վիճարկվող նորմի սահմանադրականության հարցն անհրաժեշտ է դիտարկել՝

1. սեփականության իրավունքի տեսանկյունից,

2. իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի տեսանկյունից,

3. համաչափության և որոշակիության սկզբունքների տեսանկյունից:

Այսպես, նախ անհաժեշտ է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի հասկացությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի

կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսինքն՝ վարչական ակտը անհատական իրավական ակտ է, որը դրա հասցեատիրոջ համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և/կամ պարտականություններ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը վերաբերում է վիճարկման հայցատեսակին, համաձայն որի՝ *վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված չորս դեպքերի:*

Այսինքն՝ վարչական ակտը ենթադրում է որևէ իրավունքի/պարտականության սահմանում (փոփոխում, ճանաչում, դադարեցում) անձի համար, հետևաբար՝ վարչական ակտի կատարումը՝ ենթադրում է վերը նշված իրավունքի և/կամ պարտականության իրացումը, այսինքն՝ ոչ թե բուն իրավունքը կամ պարտականությունը, այլ դրա իրացումը: Մասնավորապես, եթե անձի համար վարչական ակտով սահմանվել է որևէ իրավունք (բարենպաստ վարչական ակտ), ապա վարչական ակտի վիճարկումը կենթադրի տվյալ իրավունքի իրացման կասեցում, կամ, եթե վարչական ակտով անձի վրա դրվել է որևէ պարտավորություն (միջամտող վարչական ակտ), ապա նշված ակտի վիճարկումը կենթադրի տվյալ անձի կողմից տվյալ պարտավորության կատարման կասեցում:

Նույն կերպ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով քննարկվող խնդիրն ըստ էության վերաբերում է շինարարության թույլտվությանը, կարծում ենք, անհրաժեշտ է բացահայտել «շինարարության թույլտվության» հասկացությունը և քննարկել այդ թույլտվության կատարման կասեցման հարցը:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Այսինքն՝ շինարարության թույլտվությունը վարչական ակտ է, որը սահմանում է կառուցապատողի իրավունքը կատարել որոշակի գործողություն, այն է՝ իրականացնել շինարարություն:

Շինարարության թույլտվության՝ որպես վարչական ակտի կատարման կասեցումը կնշանակի դրանով տրված իրավունքի, այսինքն՝ շինարարություն իրականացնելու իրավունքի իրացման կասեցում:

Ընդ որում, շինարարության թույլտվության գործողության կասեցման հնարավորությունը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որի 135-րդ կետի համաձայն՝

Եթե կառուցապատողն աշխատանքների կատարման ընթացքում թույլ է տվել սույն կարգի 129-րդ, 130-րդ և 133-րդ կետերով սահմանված դրույթների խախտում, ապա խախտումը բացահայտվելու պահից շինարարության թույլտվության գործողությունը կասեցվում է իրավասու մարմնի որոշմամբ՝ մինչև կասեցման պատճառների վերացումը,

ընդ որում, կասեցումը հիմք չէ շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար: Շինարարության թույլտվությունը կարող է կասեցվել նաև օրենքով վարչական ակտերի կասեցման համար նախատեսված դեպքերում և կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտեր են համարվում ինչպես սեփականության իրավունքն ուղղակի ճանաչող վարչական ակտերը (սեփականություն տրամադրելու մասին համապատասխան մարմնի որոշում, կադաստրի կոմիտեի կողմից սեփականության իրավունքի գրանցում և այլն), այնպես էլ վարչական ակտեր, որոնց արդյունքում ստեղծվում է սեփականության իրավունքով պաշտպանվող արժեք (շինարարության թույլտվություն, լիցենզիա և այլն), ապա անհրաժեշտ է վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը դիտարկել սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44):

Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը ճանաչված և պաշտպանված է սահմանադրորեն. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*

Սակայն նույն հոդվածի 3-րդ մասում նշված է՝ *սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Այսինքն՝ սեփականության իրավունքը, որքան էլ որ սահմանադրորեն երաշխավորված իրավունք է, միևնույնն է, բացարձակ իրավունք չէ և օրենքով նախատեսված դեպքերում այն կարող է սահմանափակվել: Նշված հարցին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումների շրջանակներում:

2011 թվականի հունիսի 21-ի ՍԴՈ-980 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետևաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջև ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝

օրենքով սահմանված կարգից դուրս ցանկացած իրականացման հնարավորություն կիսաթարի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը»:

2015 թվականի ապրիլի 28-ի ՄԴՈ-1203 որոշման մեջ անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման հարցին՝ փաստվել է հետևյալը. «5. ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սակայն սեփականության իրավունքը բացարձակ չէ և վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության իմաստով այն կարող է սահմանափակվել, եթե դրա իրականացումը կարող է վնաս պատճառել շրջակա միջավայրին, խախտել այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1073 որոշման մեջ անդրադարձ է կատարել սեփականության իրավունքի սահմանափակման միջազգային իրավական փորձին և վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ սեփականության պաշտպանությանն ուղղված սահմանադրական և միջազգային իրավական դրույթները «.... այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Իսկ 2015 թվականի մայիսի 26-ի ՄԴՈ-1210 որոշման մեջ նշված է. ***«5. Հիմնական եզրահանգումն այն է, որ օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում»:***

Այսպես, եթե վիճարկվում է վարչական ակտ, ապա ենթադրվում է, որ կասկածներ կան դրա օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ, և/կամ այն խախտում է այլոց իրավունքներն ու օրինական շահերը, այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե ով է ներկայացրել հայցադիմումը՝ նժարի մի կողմում դրվում է այն անձի (հասարակության, պետության) շահը, ով դիմել է դատարան իր իրավունքների լեզիտիմ պաշտպանության ակնկալիքով, իսկ մյուս կողմում, կախված այն հանգամանքից, թե ինչպիսի վարչական ակտ է վիճարկվում, դրվում է կամ մեկ այլ անձի, պետության կամ հասարակության շահը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, ապա ***իրավաչափ է, որ վարչական ակտի վիճարկման դեպքում նախատեսվել է բոլոր տեսակի վարչական ակտերի կատարման կասեցում, առանց ի նկատի ունենալու առանձին, անհատական դեպքեր, ինչպիսին օրինակ՝ Դիմողի հիմնավորման մեջ նշված շինարարության թույլտվությունն է, այսինքն՝ գործող կարգավորմամբ նախատեսված է միատեսակ մոտեցում բոլոր դեպքերի համար:***

Իրավական ակտի մեկնաբանման, գործածության, որոշակիության և համաչափության գնահատման համար արդարացի չէ դրա հիմքում դնել մասնավոր դեպքերը. օրենսդրական կարգավորումը պետք է լինի վերացական, ընդհանուր, ուղղված չլինի անձանց կոնկրետ շրջանակի կամ անհատների շահերի պաշտպանությանը կամ առանձին մասնավոր դեպքերի կարգավորմանը:

Սահմանադրությամբ հստակ նշված է, որ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Դիմողի կողմից նշված շինարարության թույլտվության վիճարկման կասեցումն իրավաչափ է թեկուզ միայն այն տեսակետից, որ եթե վիճարկվում է շինարարության թույլտվությունը, ապա ենթադրվում է, որ կա՝ մ այն ձեռք է բերվել օրենքի խախտմամբ, կա՝ մ դրա հիմքում դրվել են օրենքի խախտմամբ կազմված փաստաթղթեր, կա՝ մ այլ դեպքեր, որոնք ցանկացած դեպքում վտանգի տակ են դնում հասարակության, կյանքի, գույքի, շրջակա միջավայրի անվտանգությունը: Ուստի դրա կասեցման իրավասությունը դատարանին թողնելը (օրինակ՝ վիճարկման հայցի դեպքում հայցի ապահովում նախատեսելով) չի կարող դիտվել օրինաչափ, քանի որ չեն բացառվելու տարրակերպ մեկնաբանությունները, և միննույն փաստական հանգամանքների դեպքում դատավորների կողմից տարբեր որոշումների կայացումը: Հայց ներկայացնողի իրավունքների տեսանկյունից դա ևս իրավաչափ չի դիտարկվի, քանի որ վերջինիս՝ իր իրավունքների պաշտպանության լեզվով ակնկալիքը կթողնվի դատարանի հայեցողությանը, կբացառվի կանխատեսելիությունը և որոշակիությունը:

Ինչ վերաբերում է շինարարության թույլտվության, որպես վարչական ակտի, վիճարկման դեպքում դրա կատարման կասեցման արդյունքում այն ձեռքբերողի իրավունքների պաշտպանությանը, ապա ՀՀ օրենսդրության մեջ գործում է վնասի հատուցման ինստիտուտը: Այսինքն՝ մի կողմից սահմանափակելով անձի մի իրավունքը, օրենսդիրը նախատեսել է դրա հնարավոր բացասական հետևանքների դեպքում մեկ այլ իրավունք: Բացի այդ, չեն բացառվում այն դեպքերը, երբ շինարարության թույլտվությունը (վարչական ակտը) ճանաչվի անվավեր, այսինքն՝ այս դեպքում անձի՝ սեփականության իրավունքի պաշտպանության մասին խոսելն արդեն առարկայագուրկ է դառնում:

2. Այժմ անդրադառնանք անձի՝ դատական պաշտպանության, ինչպես նաև՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքների իրացման հարցին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՄԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՄԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի,

միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական

պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

3. ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին և արտահայտել հետևյալ դիրքորոշումը.

2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք

է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

2016 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ–1270 որոշման մեջ արտահայտվել է հետևյալ դիրքորոշում. «7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ–630, ՄԴՈ–1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ–677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2001 թվականի հունվարի 11-ի ՄԴՈ–278 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «6. Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները. ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը»:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ–1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝

չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Համաչափության սկզբունքին վերաբերող 2016 թվականի մարտի 10-ի ՄԴՈ-1257 որոշման համաձայն՝ «11. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրը նախատեսել է ողջամիտ պահանջներ, որոնք դատարան դիմող անձին ոչ թե ծանրաբեռնում են ձևական, ավելորդ պահանջներով, այլ նախատեսում են առաջնահերթ, իրավական տեսակետից անհրաժեշտ ու իրագործելի գործողություններ, որոնց կատարումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակներ, չի առաջացնում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն և միտված է դիմող անձի, դատարանի և գործով շահագրգիռ այլ անձանց, այդ թվում՝ պատասխանողի համար, Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իրենց իրավունքների ու պարտականությունների արդյունավետ իրացման համար նախադրյալներ ստեղծելուն: Այսինքն՝ քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցի միջև առկա է համաչափություն»:

Գործող իրավակարգավորման պայմաններում, փաստորեն, ապահովվում է հայցադիմում ներկայացվելու դեպքում դրա հետևանքի կանխատեսելիությունը և որոշակիությունը, քանի որ միատեսակ օրենսդրական կարգավորման պարագայում և՛ հայցվորը, և՛ պատասխանողը գիտեն, որ վիճարկման հայցի՝ վարույթ ընդունվելու դեպքում վարչական ակտի կատարումը կասեցվելու է: Բացի այդ՝ մի կողմից հայցվորը վստահ է լինում, որ իր կարծիքով իր իրավունքները ոտնահարող վարչական ակտի կատարումը կասեցվելու է, իսկ պատասխանողը նման պայմաններում իրավունք ունի պահանջելու վնասների հատուցում: Այսինքն՝ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցի միջև առկա է համաչափություն, գործող կարգավորումը պիտանի, անհրաժեշտ և իրավաչափ է իրավական պետությունում անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ վերը նշված նորմի վիճարկման առարկա է հանդիսանում վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման հարցը՝ անդրադառնանք վարչական ակտի կատարման կասեցմանը վերաբերող 2011 թվականի սեպտեմբերի 22-ի ՄԴՈ-1007 որոշմանը, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով բողոքարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում անձի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված վերոհիշյալ համապատասխան օրենսդրական երաշխիքների առկայությունը, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը՝ գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և համապատասխան երաշխիքների միջոցով ապահովում է հավասարակշռություն հարկային պարտավորության բարեխիղճ կատարումն ապահովելու նպատակի և անձի իրավական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման միջև»:

Անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված այն հարցին, որ «վարչական ակտի կատարում» հասկացությունը տարակարծիք մեկնաբանությունների տեղիք կարող է տալ,

մեջբերենք ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՄԴՈ-766 որոշումը, համաձայն որի՝ «8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի շրջանակներում առաջնային խնդիրը վեճի առարկա նորմի պատշաճ իրավական մեկնաբանման և կիրառման երաշխավորումն է: Դրա ապահովման իրավական պարտավորությունը, ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, կրում է ՀՀ վճռաբեկ դատարանը»:

Իսկ 2019 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1452 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. **«Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:**

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 03.05.2016թ. ՄԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրությունների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ «վարչական ակտի կատարում» հասկացությանը դատական նախադեպերով մեկնաբանման հարց է և այն իրավական որոշակիության տեսանկյունից սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան